



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Ուսուցման անհատական և
տարբերակված մոտեցումները /տարրական, հիմնական կամ ավագ
դպրոցում/*

Դեռահասության տարիքի ընդհանուր

բնութագիրը

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աստղիկ Ղափանցյան

*Ուսումնական հաստատություն՝ Աշտարակի՝ Ն.Աշտարակեցու
անվան հմ 1 հիմնական դպրոց*

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	5
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	16
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության արդիականությունը: Երբեմն երեխայի նկատմամբ ճիշտ մանկավարժական մոտեցում դրսևորելու, հոգեշտկողական աշխատանքը ճիշտ ուղղու վրա դնելու համար հոգեբանին անհրաժեշտ է լինում կարճ ժամանակահատվածում ստանալ նրա անձնային առանձնահատկությունների, հոգեբանական դժոարությունների և բնավորության գծերի հնարավորինս բովանդակալից, թեկուզ և ընդհանուր պատկեր, պարբերաբար այդ խնդիրը կապված է լինում այլ՝ գործնական խնդիրների հետ, առաջին հերթին՝ հոգեբանական օգնության խորհրդատության կարիք ունեցող մարդկանց ընտրության հետ:

Իր զարգացման ընթացքում մարդն անցնում է տարբեր փուլերով, որոնցից յուրաքանչյուրին բնորոշ են իրենց առանձնահատկությունները: Փուլերից յուրաքանչյուրն էլ օժտված է իրեն հատուկ խնդիրներով, հաղթարումներով և ձեռքբերումներով, որոնք էլ նպաստում են մարդու զարգացմանը և ձևավորմանը: Այսպիսի փուլերից մեկն է դեռահասության տարիքը: Դեռահասությունը զարգացման փուլերից ամենավառ, բազմաբովանդակ և հակասական շրջանն է, որը միշտ էլ հետաքրքրություն է առաջացրել ոչ միայն հոգեբանների կողմից, այլ յուրաքանչյուրի մոտ, ով որևէ կերպ առնչվում է այդ փուլի հետ: Այս տարիքում առաջանում են մեծ և փոքր խնդիրներ, որոնք չպարզաբանելու, չլուծելու դեպքում կարող են վերածվել մեծ խնդիրների:

Վերը նշվածով էլ պայմանավորված է հետազոտության արդիականությունը:

Հետազոտության նպատակը՝ բացահայտել մանկավարժի աշխատանքի

առանձնահատկությունները վարքային խնդիրներ ունեցող դեռահասների հետ:

Հետազոտության խնդիրները.

1. Ուսումնասիրել դեռահասության տարիքի երեխաների զարգացման վերաբերյալ հոգեբանամանկավարժության գրականություն:
 2. Գիտափորձերով ախտորոշել վարքային խնդիրներ ունեցող դեռահասաների զարգացման առանձնահատկությունները:
 3. Կազմել փորձարկվողների հոգեբանամանկավարժական բնութագրերը՝ նրանց հետ մանկավարժի աշխատանքը կազմակերպելու համար:
- Հետազոտության ընթացքում կիրառված մեթոդներ՝ զրույց, դիտում,
Ռ. Լանյոնի Անձնավորության ընդհանուր հարցարան:



ԴԵՌԱՀԱՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Դեռահատությունը սովորաբար բնութագրվում է որպես անցողիկ, կրիտիկական, դժվար, շրջադարձային, սեռական հասունացման հասակ: Դեռահատության ժամանակաշրջանը երեխայի հասունացման մեջ համարվում է առանձնապես դժվար շրջան ինչպես ուսուցիչների և ծնողների, այնպես էլ հենց իրենց՝ երեխաների համար: Այսպիսի գնահատման հիմքում ընկած են կրիտիկական, հոգեբանական և ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, որոնք առաջանում են զարգացման պրոցեսում, որոնց անվանում են նաև մանկության կրիտիկական ժամանակաշրջան: Դեռահատության զարգացման շրջանը ընդգրկում է 12-15 տարեկանը և բնութագրվում է երեխայի օրգանիզմի վերակառուցման սկիզբ՝ ֆիզիկական զարգացման և սեռական հասունացման: Օրգանիզմի գործունեության խախտումը հանդիսանում է դեռահասի անհավասարակշռության հիմնական պատճառը (գրգռվածություն, նյարդայն վիճակ, տրամադրության կտրուկ փոփոխություն՝ բուռն ակտիվությունից մինչև անտարբերություն և հոգնածություն):

Դեռահասների առանձնահատկությունները կայանում է նրանում, որ արտաքինից չնայած նմանվում են մեծահասակներին, սակայն ներքին հնարավորություններով և առանձնահատկություններով նրանք երեխաներ են: Այստեղից էլ դեռահասների մոտ պահպանվում է քնքշանքի պահանջը, ուշադրությունը և հետաքրքրությունը խաղերի և զվարճությունների նկատմամբ: Դրա հետ մեկտեղ դեռահասների մոտ մեծահասակության զարգացման հետ ակտիվ ձևավորվում է ինքնագիտակցությունը, սրվում է սեփական արժանապատվության զգացումը, սեռական պատկանելիության գիտակցումը, դեռահասին հատուկ է նաև բարձր քննադատողականությունը: Եթե երեխա ժամանակ նա իրեն շրջապատող աշխարհում շատ իրադարձությունների ուշադրություն չէր դարձնում, ապա դառնալով դեռահաս նա սկսում է վերագնահատել վաղուց հայտնի և սովորական դարձած երևույթները, կատարում է ինքնուրույն վերլուծություններ, շատ հաճախ պարզամիտ կատեգորիկ և անզիջում, արդյունքում ծնողների և ուսուցիչներ հեղինակությունը կարող է թուլանալ կամ կորել ընդհանրապես: Դեռահասները շատ հիվանդագին են ընդունում այն ամենը ինչը վերաբերվում է իրենց անձնական որակների գնահատմանը, նաև իրենց ընտանիքի, ծնողների, ընկերների, սիրելի ուսուցիչների արժանիքների և թերությունների գնահատմանը: Այդ հողի վրա դեռահասները կարող են ունենալ սուր

կոնֆլիկտներ իրենց վիրավորողների հետ: Ծնողների կամ ուրիշների հեղինակության անկմանը նրանք կարող են հակազդել ամենաձայրահեղ և անսպասելի ձևով. շրջափակվել իրենց մեջ, դառնալ կոպիտ, կամակոր, ագրեսիվ, սկսել ծխել, օգտագործել սպիրտային խմիչքներ կամ թմրանյութեր, հեռանալ տնից և այլն:

Ֆիզիոլոգիայի տեսանկյունից՝ դեռահասության տարիքը գտնվում է նույն կարգում էմբրիոնալ շրջանի և մանկական տարիքի հետ, որոնց բնորոշ են կենսաբանական արագ փոփոխությունները: Դեռահասները զգում են ցավ և ուրախություն՝ հետևելով փոփոխությունների զարգացմանը. նրանք տեսնում են՝ ինչպես է ձևավորվում իրենց մարմինը և գիտակցում են իրար հերթափոխող հիացման և վախի զգացումները: Զարմացած ամոթխած և շփոթված՝ նրանք անընդմեջ համեմատում են ուրիշների հետ և վերանայում իրենց <<ես>>-ի կերպարը:

Դեռահասության տարիքում առաջին փոփոխություններին ենթարկվում է օրգանիզմը: Եթե դեռահասը պատրաստ լինի այդպիսի փոփոխություններին, ապա նա ավելի հանգիստ կտանի դրանք:

Ֆիզիկական զարգացման ընթացքում դեռահասները հանդիպում են մեկ այլ խնդրի՝ կապված առողջության հետ: Այս շրջանում այդ խնդիրը առավել արտահայտված է, քանի որ երեխաները շատ արագ են աճում և ոչ միշտ են լսում ծնողների խորհուրդները սնման, սեռական հարաբերությունների և այլ հարցերում դեռահասները նախընտրում են հետևել հասակակիցների խորհուրդներին, ում նանք ավելի հեղինակային են համարում քան ծնողներին:

Կարճ ժամանակի ընթացքում դեռահասները կարող են ուտել մեծ քանակությամբ ածխաջրեր պարունակող ուտելիք, որից հետո նրանք իրենց մեղավոր են զգում և փորձում են այդ զգացումը փոխհատուցել արհեստական փսխում առաջացնելով կամ էլ լուծողական օգտագործելով: Որոշ հետազոտողներ եկել են այն կարծիքին, որ դեռահաս աղջիկների 20%-ը տառապում են բուլիմայով կամ անորեքսիայով: Այսպիսով, դեռահասների ֆիզիկական զարգացման ընթացքում տեղի են ունենում բազմաթիվ արտաքին և ներքին փոփոխություններ, որոնք ուղեկցվում են հուզական ոլորտի կտրուկ փոփոխություններով: Այս ընթացքում շատ կարևոր է ծնողների ուշադրությունը և խոհեմությունը, որի առկայության դեպում դեռահասը կարող է խուսափել բազմաթիվ խնդիրներից, քանի որ մնալով միայնակ սեփական տարիքի խնդիրների հետ՝ նա կարող է անցանկալի հետևանքներով արարքներ կատարել:

Ուսուցումը դեռահասի համար համարվում է գործունեության գլխավոր տեսակ և նրանից, թե ինչպես է սովորում դեռահասը, կախված է նրա հոգեկան զարգացումը, նրա՝ որպես քաղաքացու ձևավորումը: Դեռահասի ուսումնադաստիարակչական գործընթացում կան դժվարություններ և հակասություններ, բայց կան նաև առավելություններ, որոնց վրա էլ պիտի հիմնվի ուսուցչի գործունեությունը: Այս շրջանի առավելություններն են ընտրողական պատրաստակամությունը, ընդունակության բարձր մակարդակը այս կամ այն բնագավառի նկատմամբ: Որպես կանոն՝ նրանց գայթակղում են դասերի ընթացքում ինքնուրույն կազմակերպումը, դասերի ինքնուրույն պատրաստումը, կրթական դժվար նյութերը, դասերից դուրս ինքնուրույն կրթական գործունեության ծավալումը: Ուսուցչի գլխավոր նպատակն է չթողնել, որ դեռահասի հետաքրքրությունը դեպի իմացություն մարի:

Դեռահասի կազմավորման ընթացքում դպրոցը կատարում է առնվազն 3 գործառույթ:

1. Կրթական ֆունկցիա: Գիտելիքների և արժեքների փոխանցում, որոնք կարևոր են մշակույթի զարգացման և պահպանման համար, ինչպես նաև հասուն մարդու դերերի և խնդիրների իրականացման համար:
2. Անձի ձևավորման ֆունկցիա: Արժեքային պատկերացումների փոխանցում և նույնականացման հեշտացում (օր.՝ ուսուցիչը որպես նմանակման օբյեկտ):
3. Սոցիալական վարքի, ադեկվատ պահելաձևի մշակման ֆունկցիա:

Այս ամենի հետ մեկտեղ դպրոցը մեծ դեր է խաղում դեռահասի՝ իր մասին պատկերացման ձևավորման մեջ: Դպրոցն ունի մեկ ֆունկցիա ևս ընտանեկան կյանքին պատրաստվածության ձևավորում: Այս խնդիրներից ոչ մեկը չի կարող լուծում գտնել մյուսներից անկախ: Դպրոցը պիտի համաձայնեցնի իր աշխատանքը ընտանիքի, հասակակիցների և այլ խմբերի հետ, և յուրաքանչյուր դեռահասի նկատմամբ ցուցաբերի յուրահաստուկ մոտեցում:

Դեռահասության շրջանում առաջանում են նոր պահանջմունքներ՝ շրջապատի ընդլայնում և մեկուսացման ձգտում:

Ուսումնադաստիարակչական գործընթացում խնդիրների առաջ են կանգնում և՛ դեռահասները, և՛ ընտանիքը, և՛ դպրոցը: Յուրաքանչյուր ծնող հավանաբար հանդիպել է մի խնդրի, որի ժամանակ երեխան պիտի կատարի տնային հանձնարարությունները, համապատասխանի որոշակի նորմերին և ենթարկվի պահանջներին, սակայն դա անել չի ցանկանում: Մեծահասակներից շատերը զգում են դաստիարակչական անարողություն՝

հանդիպելով նմանատիպ խնդիրների: Դրա պատճառը կարող է հանդիսանալ այն, որ նրանք հաճախ ուշադրություն չեն դարձնում, թե ով է նրանց առջև, ցածր, թե բարձր դասարանի աշակերտ, աղջիկ, թե տղա, ինչ բնավորության գծերով է օժտված նա: Յուրաքայտի դեռահասին անհատական մոտեցում ցուցաբերելու համար պետք է առջևում պատկերացնել ոչ միայն դաստիարակության օբյեկտ, այլ անձ՝ իր առանձնահատկություններով, առավելություններով, թերություններով և հակումներով: Այսինքն՝ ուսումնադաստիարակչության պրոցեսում հաջողության հասնելու համար հարկավոր է ճանաչել երեխային և փորձել բարձրացնել երեխային նրա ուսուցման դրդապատճառվածությունը: Դեռահասության խնդիրը ուսումնասիրող հոգեբաններից շատերը նշում են, որ երեխային ճանաչելու համար հարկավոր է հաշվի առնել.

1. Տարիքային առանձնահատկությունները
2. սեռային տարբերությունները
3. հոգեֆիզիոլոգիական բնութագիրը (օր.՝ աջիկություն, ձախիկություն)
4. անձի ուղղվածությունը
5. երեխայի նորմալ կամ շեղումնային զարգացումը
6. անհատական տարբերությունները, որոնք պայմանավորված են կյանքի փորձով, խառնվածքով, դաստիարակությամբ և այլն:

Դեռահասության շրջանում դաստիարակությունը երբեմն շատ դժվար խնդիրների առաջ կարող է կանգնեցնել: Դրանցից է վրեժխնդրության զգացման առաջացումը: Այդ զգացումը առաջանում է հիմնականում ցավ կամ վիրավորանք ապրելու հետևաքով: Այն կարող է առաջանալ տրավմայի հասնելուց ինչպես երկու բույս անց, այնպես էլ դեպքից հետո երկար ժամանակ անց: Երեխան վնաս է հասցնում ծնողին, ուսուցչին և այլ երեխայի: Այս դեպքում մեծահասակների մոտ ցանկություն է առաջանում միանգամից վերջ դնել սխալ վարքին, որը, սակայն, ժամանակավոր բնույթ է կրում և չի կանխարգելում նման վարքը: Ցանկալի է դեռահասի մոտ վստահություն ձեռք բերել, չի կարելի ծիծաղել նրա անհաջողությունների կամ ապրած զգացմունքների վրա, որպեսզի նա կարողանա կիսվել իր ապրումներով՝ առանց խուսափելու, որ իրեն չեն հասկանա, այս դեպքում ուսուցիչը կամ ծնողը կկարողանան երեխային ճիշտ ուղղու վրա կանգնեցնել, սակայն դրա համար անհրաժեշտ է նաև մի կողմ դնել սեփական հույզերը՝ չտալով ազատություն բացասական հույզերին:

Դեռահասի մանկավարժության մեկ այլ խնդիր է անհաջողությունից խուսափելը: Այդ դեպքում կարևոր խնդիրների լուծումը շատ ժամանակ անընդմեջ հետազոտվում է և արդյունքում գործը

ավարտին չի հասցվում: Օրիանակ կարող է ծառայել երեխայի անսպասելի հիվանդանալը, որը նախորդում է դպրոցական գրավոր աշխատանքին, մրցումներին կամ էլ ցանկացած գործունեությանը, որի ժամանակ երեխան կարծում է, որ ավելի լավ է նա դա չանի, քան վատ կատարի: Դա հիմնականում տեղի է ունենում այն պատճառով, որ երեխան վախենում է չարդարացնել ուսուցիչների, ծնողների կամ հասակակիցների ապրումները:

Դեռահասության խնդիրն է ձևավորել դեռահասի մոտ պահանջների, այլ ոչ թե գիտելիքների համակարգ: Ինչպես նշում է Կոնը՝ դաստիարակը առաջին հերթին ազատող է, ով օգնում է երեխային ավելի խորը ճանաչել իրեն, իրականացնել այն լավագույնը և արժեքավորը, ինչ կա իր մեջ:

Հոգեբանությունը անձի բարոյական ոլորտի ձևավորման առանձնահատկությունները խորապես ուսումնասիրելու ճանապարհով համոզիչ կերպով ցույց է տվել, որ հոգեկան նորագոյացությունների ոչ կազմը և ոչ էլ առանձնահատուկ որակները պամանավորված չեն բնածին մեխանիզմներով: Ասվածից հետևում է, որ «դժվար» երեխաները հիմնականում մանկավարժորեն բարձիթողի արված երեխաներն են: Նրանց բարոյական գծերի ձևախեղումները մանկավարժական սխալների հետևանք է: «Դժվար» երեխայի տիպական առանձնահատկությունները առանձնապես հստակ կերպով դրսևորվում են դեռահասության շրջանում, երբ երեխայի սոցիալական դիրքը զգալի փոփոխություններ է կրում, որի հետևանքով դեռահասի գործունեությունը նոր ուղվածություն է ստանում և շրջապատն էլ նոր վերաբերմունք է ցույց տալիս նրա նկատմամբ: Դեռահասությունը դեռևս զարգացման տիպիկ մանկական շրջան է, բայց այս շրջանում մենք արդեն գործ ունենք աճող և հասուն կյանքի շեմին կանգնած մարդու հետ, որը ձգտում է ինքնուրույնության, ինքնահաստատման, պահանջում է, որպեսզի մեծերը ճանաչեն իր իրավունքներն ու պոտենցիալ հնարավորությունները:

«Դժվար երեխաներ» տերմինով ավանդաբար նշանակում են այն երեխաներին, որոնց անձի կառուցվածքը ուղղումների կարիք է զգում: Այս շարքին են դասվում նաև անհնազանդ կամակոր ու քմահաճ երեխաները: Բնավորության այդ գծերի զարգացումը կանխելու և հաղթահարելու հիմնական ուղղին նման շեղումների իրական պատճառները բացահայտելը, երեխաների պահանջմունքների ու հետաքրքրությունների նկատմամբ ուշադրություն հանդես բերելն է, որը պետք է զուգորդվի պահանջկոթյան հետ: Երեխան միաժամանակ պետք է ընդգրկվի հանրօգուտ գործունեության մեջ: Երեխաները հաճախ աչքի են ընկնում չարաձճիությամբ, անկարգությամբ և կոպտությամբ: Նման աշակերտները անհատական մոտեցում են պահանջում: Նման երեխաների

հետ տարվող աշխատանքը ենթադրում է նրանց ակտիվության նպատակասլաց կազմակերպում, հարգանք նրանց արժանիքների և ինքնություն լինելու իրավունքի նկատմամբ:

Որոշ խումբ են կազմում այն երեխաները, որոնց ամենաբնորոշ բացասական գիծը ստախոսությունն է, որի դեմ արդյունավետ պայքար մղելու համար պետք է իմանալ, որ այն երկու ձևով է հանդես գալիս. հորինումը կամ ֆանտազիաների ստեղծումը, որը առավել բնորոշ է կրտսեր դպրոցականներին: Նման դեպքերի հետ առնչվելիս հարկավոր է մանրակրկիտ և քրտնաջան աշխատանք տանել, որը ունի հետևյալ նպատակները.

- ստախոսության իսկական պատճառների բացահայտում
- վստահության, փոխադարձ հարգանքի ու պահանջկոտության մթնոլորտի ստեղծում
- կեղծիքի բացահայտում

«Դժվար» դեռահասիզարգացման սոցիալական իրավիճակն այնպիսին է, որ նա դուրս է մնում և՛ ընտանիքի, և՛ դպրոցի կոլեկտիվից: Բայց, քանի որ այդպիսի դեռահասը պահպանում է շփվելու իր ինքնությունությունը ու հասուն լինելը տեսնելու պահանջմունքը, նա հայտնվում է դեռահասների «փողոցային» խմբում, որի միկրոմիջավայրում որոշակի հնարավորություններ կան ինքնագնահատման բարձրացման և ընտանեկան ու դպրոցական կոլեկտիվների տված բացասական գնահատականի փոխհատուցման համար: Դրա հետ միասին այդպիսի միկրոմիջավայրում դեռահասի վիճակը շատ ծանր է, քանի որ նա գտնվում է «բակի հերոսների» ազդեցության տակ: Սրանք տարիքով ավելի մեծ լինելով իրենց «հեղինակությամբ», իսկ ավելի հաճախ սպառնալիքների օգնությամբ ճնշում գործադրելով, դեռահասներին միավորում են խմբի մեջ: Նման իրավիճակը, երբ դեռահասը դուրս է մնում ընտանիքի և դպրոցի կոլեկտիվից, և պաշտպանություն է որոնում դեռահասների յուրահատուկ անիշխանական, բակային կոլեկտիվի ներքին փոխհարաբերություններում դեռահասների պահանջմունքների ինքնահաստատման ու շփման զարգացմանը սխալ ուղղվածություն է հաղորդում: Երբ դեռահասը դուրս է մնում նորմալ, այսինքն՝ այնպիսի հարաբերությունների ոլորտից, որտեղ նա գիտակցում է իր հնարավորությունները, նշանակալիությունն ու հասարակության համար իր օգտակարությունը, ապա նա սկսում է հակադրվել հասարակությանը, նրա անդամներիակտիվությանը և այն հիմնական գործունեությանը, որն օգտակար է հասարակության համար: Նման դեռահասների դաստարակության կազմակերպման կարևորագույն պայմանը առանց բացառության բոլոր դեռահասներին նպատակասլաց կերպով կազմակերպված գործունեության զանազան ձևերի մեջ ներգրավելն է: Հատկապես պետք է շեշտը դնել հանրօգուտ աշխատանքային գործունեության

կազմակերպման վրա, որը կարծես միմյանց հետ է կապում և ակտիվացնում է դեռահասի գործունեության բոլոր ձևերը:

Կարևոր նշանակություն ունի «դժվար» դեռահասների տիպերի առանձնացումը, որը թույլ է տալիս դասակարգել նաև դաստիարակչական աշխատանքի հնարները: Ա. Ի Կոչետովն առաջարկել է հետևյալ պայմանական դասակարգումը.

1. շփման ոլորտում խախտումներ ունեցող երեխաներ
2. խիստ բարձր կամ ցածր հուզական հակազդումներ ունեցող երեխաներ
3. միակողմանի մտավոր զարգացում ունեցող երեխաներ
4. կամային որակների սխալ զարգացում ունեցող երեխաներ (կամակոր, թուլակամ, անկարգ, անկազմակերպ):

Դ. Ի. Ֆելդշտեյնը առաջադրել է դժվար երեխաների նախնական դասակարգում, հաշվի առնելով նրանց վարքագծի ձևը, հանրագուտ գործունեության մեջ ներգրավվելու ձևը, ինչպես նաև նրանց անձի բարոյական ոլորտի մասին ունեցած միագումարությունը:

Դեռահասների առաջին խումբը բնութագրվում է հասարակական առումով բացասական այնպիսի որակների այնպիսիկայուն կոմպլեքսով, ինչպիսիք են՝ անբնականոն, անբարոյական ու տարրական պահանջմունքները ակնհայտորեն հակահասարակական հայացքների համակարգը:

Այդ խմբի դեռահասների մոտ խեղաթյուրված են ընկերության և համարձակության մասին պատկերացումները, խիստ թույլ է արտահայտված ամոթի զգացումը: Նրանք ցինիկ են, չարացած, ագրեսիվ, կովարար:

Երկրորդ խումբ են կազմում ձևախեղված պահանջմունքներ, ստորին կարգի ձգտումներ ունեցող դեռահասները: Սրանք ընդօրինակում են այն անչափահաս օրինազանցներին, որոնք ունեն անբարոյական պահանջմունքների կայուն համակարգ և հայացքների բացահայտորեն հակահասարակական ուղղվածություն: Նրանց համար բնորոշ է իմպուլսիվությունը, անկայունությունը, տրամադրությունների արագ հերթափոխը: Նրանք խեղաթյուրված պատկերացում ունեն արիության ու ընկերության մասին: Այս խմբի դեռահասներ համար բնորոշ են խիստ սրված ինքնասիրությունը, խորամանկությունը, կամակորությունը, ստախոսությունը, մարդկանց նկատմամբ անվստահությունը, աշխատասիրության բացակայությունը:

Երրորդ խմբի համար բնորոշը կոնֆլիկտն է ձևախեղված և դրական պահանջումների, հարաբերությունների, հետաքրքրությունների և հայացքների միջև: Այս խմբի դեռահասները աչքի են ընկնում ցուցադրական քաջությամբ, խորամանկությամբ, հանրօգուտ գործերի նկատմամբ անտարբերությամբ, մարդկանց նկատմամբ անվստահությամբ և իրենց անցյալը գովաբանելու սովորությամբ:

Չորրորդ խումբը կազմում են թեթևակիորեն ձևախեղված պահանջումներ ունեցող դեռահասները: Սրանց բնորոշ գծերն են կամազրկությունը, թեթևամտությունը, սեփական ուժերի նկատմամբ անվստահությունը, ավելի ուժեղ կամքի տեր ընկերների առջև ստորաքրքրություն անելը:

Հինգերորդ խմբի մեջ մտնում են այն դեռահասները, ովքեր պատահականորեն են օրինազանցությունների ուղղին բռնել: Այդ դեռահասները աշխատասեր են, ունեն ամոթի սուր զգացում, բայց կամազուրկ են:

Առաջին խմբի դեռահասներին դաստիարակելու հիմնական ուղղին նրանց անձի այնպիսի որակների վրա հենվելն է, ինչպիսիք են եռանդունությունը, դրված նպատակին հասնելու գործում ցուցաբերվող համառությունը, հեղինակություն և առաջնություն ձեռք բերելու ձգտումը:

Երկրորդ խմբի դեռահասների համար հատուկ նշանակություն ունի բուն իրադրության և նրան հակազդելու ձևերի փոփոխումը: Նրանց նկատմամբ ցուցաբերվող ընդգծված վստահությունը, հասարակական գործունեության մեջ ընդգրկելը:

Դեռահասների երրորդ խմբի համար կարևոր են աշխատանքային գործերի դիման ու լարվածությունը, նրանց որոնողական բնույթի աշխատանքներում ընդգրկելը:

Հանրօգուտ աշխատանքային գործունեության համակարգում չորրորդ խմբի դեռահասների ներգրավել ակտիվորեն նպաստում է կյանքի նկատմամբ նրանցում հետաքրքրություն, դրական հոգեվիճակներ, պատկերացումներ արթնացնել:

Դժվար դեռահասների տիպերի առանձնացումը թույլ է տալիս ոչ միայն ճշտել դաստիարակչական ներգործության համակարգը ամբողջությամբ վերցրած, այլև ուղիներ է բաց անում սուր կոնֆլիկտային իրավիճակում գտնվող յորաքանչյուր երեխայի նկատմամբ անհատական մոտեցում հանդես բերելու համար: Ընդ որում ոչ հաճախ կատարվող աշխատանքը կամ միջոցառումները արդյունավետ չեն կարող լինել: Դեռահասներն հանրօգուտ

գործունեության ներգրավելու ուղղությամբ հետևողական աշխատանք պետք է կատարել, որը պետք է կազմակերպվի նրանց առանձնահատկությունները հաշվի առնելու հիման վրա: Միայն նպատակասլաց կերպով կառուցված այդպիսի համակարգը կարող է աստիճանաբար հանգեցնել երեխաների հակասոցիալական վարքի վերացմանը, բայց ոչ թե դժվար դեռահասներին հատուկ բացասական գծերի համահարթեցման, այլ նրանց անձի բարոյա-կամային կայուն ու դրական որակների ձևավորման ճանապարհով:

Այս թեմայի համար անհրաժեշտ հետևություններից ելնելով կարելի էմ հետազոտական աշխատանք դեռահասների տարիքային առանձնահատկությունների, հոգեբանական դժվորությունների, բնավորության գծերի հետազոտության նպատակով:

Հետազոտությունն անցկացրել էմ արարատի մարզի Կանաչուտի միջնակարգ դպրոցում: Հետազոտական աշխատանքին մասնակցել են 30 դեռահասներ:

Հետազոտության ընթացքում կիրառել էմ երեք մեթոդներ՝ զրույց, դիտում և Ռ. Լանյոնի «Անձնավորության ընդհանուր հարցարանը»: Մեթոդներն ինձ օգնեցին ճիշտ կազմակերպել հետազոտությունը, ավելի խորն ուսումնասիրել թեման և հանգել որոշ եզրակացությունների:

Հոգեբանական զրույցը ունի իր առանձնահատկությունները թե՛ կազմակերպչական, թե՛ բովանդակային առումով: Զրույցից առաջ անհրաժեշտ է կազմել զրույցի պլանը, մշակել հարցերը, դրանց հաջորդականությունը:

Հետազոտության ընթացքում դեռահասների հետ զրույցել էմ կոնկրետ թեմաներով, որն էլ հնարավորություն տվեց լրացուցիչ տեղեկություններ ստանալ հետազոտվողների մասին: Զրույցը թույլ տվեց որոշել նրանց վերաբերմունքը դպրոցի, ուսման նկատմամբ, պարզել նրանց նախասիրությունները, որոշել նրանց սոցիալականացման հաջող կամ անհաջող լինելը:

Զրույցը ուներ հետևյալ կառուցվածքը.

1. Ընտանիք (հետազոտվողի դերը ընտանիքում, դեռահասների թիվը ընտանիքում, նրա հաշտ կամ անհաշտ լինելը մյուս երեխաների հետ):
2. Ընկերական շրջապատը (թույլ տվեց պարզել դեռահասների շփվելու, փոխհարաբերություններ ստեղծելու կարողությունները, ունի՞ մտերիմ ընկեր, ինչպիսի՞ ընկեր է նա և այլն):

3. Ուսումնական գործունեությունը (թույլ տվեց պարզել, թե դեռահասը գիտակցում է ինչ՞ ու է հաճախում դպրոց, ի՞նչ է սպասվում, եթե անկիրթ մնա, շրջապատում կա՞ն այդպիսիք):

Զրույցի հետ համատեղ կիրառել եմ հոգեբանական դիտում, որը թույլ տվեց ճիշտ կողմնորոշվելու նրանց բնութագրելիս: Ինքնադիտումը շատ օբյեկտիվ կատարվող ուսումնասիրություն է, որն իրականացնում է անձը իր մեջ եղած հոգեկան գործընթացները ճանաչելու նպատակով:

Իմ հետազոտության ընթացքում հոգեբանական դիտումը կատարել եմ ելնելով դեռահասների տարիքային առանձնահատկություններից, իմ առջև դրված նպատակից: Դիտումն իրականացրել եմ այլ մեթոդների հետ համատեղ՝ զրույց և դիտում, Լանյոնի թեստ և դիտում: Դիտման մեթոդը կիրառել եմ զրույցի հետ համատեղ, քանի որ անհրաժեշտ է տեսնել թե հետազոտվողը ինչպես է իրեն պահում զրույցի ընթացքում, ինչպիսին է եղել նրա դիտման արտահայտությունը:

Դեռահասների ընդհանուր բնութագրերը որոշելու համար կիրառել եմ Ռ. Լանյոնի թեստը, որի էությունը կայանում է նրանում, որ թույլ է տալիս բացահայտել դեռահասների առանձնապես կարևոր՝ անձնավորության դրսևորման ու հոգեբանական պաշտպանվածության աստիճանները, որոնք հաշվի առնելով կարելի է ճիշտ կազմակերպել ուսումնադաստիարակչական աշխատանքները դպրոցում, թույլ է տալիս ճանաչել երեխայի անձը, որի մեջ է մտնում բնավորությունը, խառնվածքը, գործունեության գերակշռող դրդապատճառների և զգացմունքների ամբողջությունը, ձևավորված ընդունակությունները:

Թեստավորումը կարելի է անցկացնել ինչպես անհատական, այնպես էլ խմբային եղանակով, աշխատանքը տևում է 15-30 րոպե: Արձանագրության ձևերը բաժանելուց առաջ անհրաժեշտ է բացատրել թեստավորման նպատակը, նշել նաև, որ ոչ մի պնդում անպատասխան չմնա, որ անկեղծությունը այդ աշխատանքի հաջողության կարևորագույն պայմանն է: Միաժամանակ պետք է աշխատել շատ երկար չմտածել և նշել միտքը եկած առաջին պատասխանը:

Ինչպես արդեն նշեցինք տղաների և աղջիկների համար գոյություն ունի միավորային տարբեր սանդղակներ, այդ պատճառով էլ արդյունքների վերլուծության ժամանակ անպայման պետք է հաշվի առնել հետազոտվողի սեռը:

Մոցիալական անհարմարվողականությունը: Այս սանդղակը գնահատում է անձնավորության տարածված առանձնահատկություններից մեկի արտահայտվածության աստիճանը՝ օրինազանցությանը, հասարակական նորմերին և կանոններին հարմարվելու դժվարությունը,

անհաշտվողականությունը և այլն: Այս սանդղակի բնութագրումները համապատասխանում են հետազոտված դեռահասներից 4-ին կամ 1,2%-ին:

Անհանգստություն: Այս բնութագրումը առավել ընդգծված է հետազոտվողներից մեծ մասի մոտ: Անհանգստության սանդղակը հիմնականում չափում է անձնավորության տազնապայնության աստիճանը և այն ներքին անհանգստության զգացումը, որը գալիս է սեփական չհարմարվածության գիտակցումից: Այս բնութագրումներն ունեն դեռահասներից 13-ը կամ 3,9%-ը:

Դրսևորում: Այս սանդղակը իր վերջին բևեռում բացահայտում է անձնավորության թերահսկողականությունը: Ստորին բևեռում՝ գերահսկողականությունը: Հետազոտվողներից 9-ի մոտ նկատվեց այս բնութագրումը, որոնք կազմում են հետազոտվածների 2,7%-ը:

Պաշտպանվածություն: Մա անձնավորության շատ կարևոր բնութագրերից մեկն է: Հոգեբնական պաշտպանվածության ձևերը բազմազան են և ընդհանուր առմամբ սովորական ու տարածված: Այս սանդղակում միայն ցածր միավորներն են գրանցվել: Մանդղակի վերին բևեռում միավոր չի արձանագրվել: Այս բնութագրումն ունեն դեռահասներից 4-ը կամ 1,2%-ը:

Ախտայնության սանդղակում առավելագույն միավոր չի գրանցվել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Մանկավարժ-դաստիարակի տեսադաշտում դաստիարակությունը միշտ պետք է հանդես գա դպրոց-ընտանիք-հասարակություն եռանկյունու մեջ, որտեղ դպրոցի մանկավարժը, մանկավարժական կոլեկտիվը պետք է հանդիսանա ուղենիշ, իր գործունեության ոլորտում ընդգրկի ինչպես ընտանեկան, այնպես էլ հասարակական շրջապատը:
2. Մանկավարժի ջանքերը պետք է ուղղված լինեն այն բանին, որ երեխայի մեջ արթնացնի դրական վերաբերմունք շրջապատող աշխարհի, այն ամենի նկատմամբ, ինչ մարդն է ստեղծում, ինչ մարդուն է ծառայում և իհարկե, նախ և առաջ հենց մարդու նկատմամբ: Այդ նպատակին հասնելու համար պետք է յուրաքանչյուր աշակերտի հոգու մեջ ներթափանցել, յուրաքանչյուրի նկատմամբ ունենալ առանձին մոտեցում, կարողանալ յուրաքանչյուրի մեջ տեսնել և՛ լավը, և՛ վատը, լավը՝ խրախուսելու, վատը՝ փոխելու համար:
3. Աշակերտը ոչ միշտ է գիտակցում իր վարքի դրդապատճառները: Դաստիարակչական գործընթացը իրագործվում է միայն երեխայի և դաստարակի սերտ համագործակցությամբ, վստահության մթնոլորտում: Անհրաժեշտ է, որ և՛ երեխան, և՛ դաստիարակը ձգտեն ընդհանուր նպատակին: Եթե դա տեղի չունենա, ապա երեխայի մեջ կառաջանա վիրավորանքի, չհասկացվելու զգացում, համոզմունք, որ իր նկատմամբ անարդարացի են: Այդ ժամանակ հնարավոր է, որ մանկավարժի ցանկացած ցուցում կամ նկատողություն առաջացնի տհաճ հուզական ապրումներ: Երեխան կդադարի ուշադրություն դարձնել ուսուցչի խոսքերին, առավել ևս նկատողություններին:
4. Հետազոտության ընթացքում ուսումնասիրել եմ հետազոտվող դեռահասների տարիքային առանձնահատկությունները, որը հնարավորություն է տալիս նրանց հետ տանել անհատական աշխատանքներ և բացահայտել դեռահասների վարքում նկատվող խնդիրների պատճառը:
5. Կատարված հետազոտությունը նպատակ ուներ ոչ միայն բացահայտելու դեռահասների անձի զարգացման առանձնահատկությունները, այլև մանկավարժին ցույց տալ, թե ինչպես պետք է ուսումնասիրել հոգեբանական խնդիրներ ունեցող երեխաներին, նրանց հետ աշխատանքը կազմակերպելուց առաջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նալչաջյան Ա. Ա. «Հոգեբանության հիմունքներ», 1977թ.
2. Պետրովսկի Ա. Վ. «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», 1977թ.
3. Брилинг Е. Е. "Внимание: подросток!", 1970
4. Кон И. С. "Психология старшеклассника", Хрестоматия, ред. сост. Райгородский д. Я., Самара, "Бахрах", М., 2002
5. Матюхина М. В. "Вопросы формирования мотивации учения у младших школьников на уроке", Волгоград, 1980
6. Мудрик Л. В. "Современный старшеклассник" - Хрестоматия по возрастной психологии, под ред. Фельштейна Д. И., М., 1996
7. Кочетков А. И. "Перевоспитание подростка", М. 1972г.
8. Обухова Л. Ф. Возрастная психология М. Российское агентство, 1995
9. Ремшмидт Х. Психология взросления,- Подросток и семья Хресптоматия, ред. сост. Райгородский Д.Я., Самара, Бахрах М., 2002г.
10. Славина Л.С. Дети с аффективным поведением Просвещение 1966г.
11. Стаханова Т. А. "Почему учиться нужно?" Или об индивидуальном подходе к учебной мотивации", 1990
12. Фельдштейн Д. И. Трудный подросток Душанбе, 1972г.
Особенности стадий развития личности на примере подросткового возраста,- Хрестоматия по возвратной психологии, под ред. Фельштейна Д. И. М. 1996г.
13. Эриксон Э. Развитие личности: психосоциальные стадии, -Хьелл Л., Зюлер Д.
Теории личности, -СП Б. Питер, 2007.

